

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըր երէկ նախագահեց Ապահովութեան Կեդրոնական խորհուրդին ժողովին, որուն ընթացքին քննարկուեցան երկրին ապահովական կացութեան առնչուած հարցեր:

Ժողովին ներկայ գտնուեցան ընդհանուր դատախազ Ատնան Ատուում, ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն Կոր. Ժամիլ Սայիխ, ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կոր. Մարուան Չէյն, բանակի գաղտնի ապաստարկութեան տնօրէն Կոր. Ռեմոն Ապար, Պէյրութի նահանգապետ Եագուպ Ասրաֆ, Ապահովութեան Կեդրոնական խորհուրդի ընդհանուր քարտուղար Կոր. Խալիլ Ապի Ռաշէտ, ինչպէս նաեւ Կինուրական այլ պատասխանատուներ:

Ժողովին ետք հրապարակուած հաղորդագրութեամբ մը հաղորդուեցաւ, որ խորհուրդը որոշած է շարք մը գործողութիւններ եւ միջոցառումներ գործադրել ամրապնդելու համար ապահովութիւնն ու կայունութիւնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում եւ Սուրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնները ու Հայէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը տեղեկացուում են, որ ս. թ. Փետրուարի 19ին առաւօտուն 8:00ից մինչեւ երեկոյեան 20:00 տեղի են ունենալու Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւնները, որոնց նախապարտաւան է անցկացման ընթացքում Յորդանանում, Լիբանանում եւ Սուրիայում բնակուող կամ գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները կարող են մասնակցել ընտրութիւններին Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրինագրքով եւ Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի որոշմամբ սահմանուած կարգով:

Լիբանանում, Սուրիայում եւ Յորդանանում Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւնները նախապատրաստում, կազմակերպում եւ անցկացնում են Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնները Դամասկոսում եւ Պէյրութում. ինչպէս նաեւ ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը՝ Հայէպում:

Լիբանանում եւ Սուրիայում Հայաստանի դեսպանութիւններում ու Հայէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնում հաշուառուած Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները ներառուած են ընտրացուցակներում, որոնց կարելի է ծանօթանալ Հայաստանի վերոյիշեալ դիւանագիտական ներկայացուցչութիւններում եւ հիւպատոսական հիմնարկում: Լիբանանում, Սուրիայում եւ Յորդանանում բնակուող, կամ գտնուող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, որոնք ներառուած չեն յիշեալ ցուցակներում, ընտրութիւններին մասնակցելու համար հրաւիրուում են Պէյրութում եւ Դամասկոսում Հայաստանի դեսպանութիւններ, ինչպէս նաեւ Հայէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն ընտրողների ցուցակներում ընգրկուելու յայտ ներկայացնելու համար: Յայտում պէտք է նշուի ընտրողի ազգանունը, անունը, ծննդեան օրը, ամիսը, տարին, անձնագրի համարը, ժամանակաւոր եւ մշտական բնակութեան վայրերը (հասցէները):

Ստացուած յայտերի հաշուառման հիման վրայ կազմուելու են ընտրողների վերջնական ցուցակները:

Լիբանանում եւ Սուրիայում Հայաստանի դեսպանութիւններում ու Հայէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնում կազմաւորուելու են տեղամասային ընտրական կենտրոններ, ինչպէս նաեւ տեղամասային ընտրական յանձնաժողովներ:

Լիբանանում, Սուրիայում եւ Յորդանանում Հայաստանի Հանրապետութեան նախագահական ընտրութիւնների քուէարկութիւնը անց է կացուելու Հայաստանի Հանրապետութեան Ընտրական օրինագրքով սահմանուած կարգով՝ տեղամասային կենտրոններում, որոնք գտնուելու են Պէյրութում, Դամասկոսում եւ Հայէպում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններում եւ հիւպատոսական հիմնարկում հետեւեալ հասցէներով՝

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ
Հասցէ՝ 28 Ռի Տէ Ժամէն, Մթայէպ
Հեռ. (04)408860

ՍՈՒՐԻԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ
Մեզպէ Ծարքիա, Ծաֆիի փողոց 13,
Դամասկոս
(011)6130952

ՀԱՆՈՐԴԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ
Էլ Քաւաքիբի 4, Տախ Հուսէյն 12,
Հայէպ
(021)2687240

ՀԱՄԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԵՆՍԱԿԱՆ Է

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Նախագահ Գօր. Էմիլ Լահուտ երէկ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ իրաքի տագնապին խաղաղ լուծում մը ապահովելու: Ան մերժեց իրաքի դէմ պատերազմ մղելու ընտրանքը:

Նախագահ Լահուտ նկատել տուաւ, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին ներկայացուած տեղեկագիրը՝ գէնքի քննիչներու կողմէ, ցոյց տուած է, որ իրաքի մէջ հաւաքական քանդումի եւ կործանողին գէնքեր գոյութիւն չունին:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ քննիչներուն պէտք է տրամադրուի յանձնել ժամանակ փաստելու համար վերոնշեալ գէնքերուն չգոյութիւնը, որպէսզի Միջին Արեւելքի ուղղուած պատերազմի վտանգը չբնայ:

Նախագահ Լահուտ նշեալ յայտարարութիւնները կատարեց Պապատայի մէջ շարք մը երեսփոխաններ ընդունած ժամանակ:

Նախագահ Լահուտ վերահաստատեց, որ ներկայ Հանգրուանը պայթուցիկ է եւ իւրաքանչիւր անհատ պէտք է զգուշանայ: Ան աւելցուց, որ արքայ ժողովուրդները պէտք է կոչ ուղղեն համարաբար կանգնուած լինելու միասնականութեան, որովհետեւ անոնք անհրաժեշտութիւն են, շրջանին ժողովուրդները կը փրկեն խոտորանի գարգացումներէ եւ իրաքը կը գործընդհանրէ իր դէմ ուղղուած պատերազմը:



Զօր. Լահուտ կ'ընդունի երեսփոխան Լարպը

րագմի սպառնալիքներուն:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ ՄԱԿ պէտք է իրաքի թղթածրուարին հետ վարուել կատարեալ առարկայական նութեամբ եւ չհզոթութեամբ, որովհետեւ անոր խաղաղ լուծումը շատ կարեւոր է:

Նախագահ Լահուտ անդրադարձաւ նաեւ իսրայէլեան ընտրութիւններուն եւ ըսաւ, որ Արիէլ Շարոնի վերընտրութիւնը ցոյց կու տայ, որ իսրայէլացի ժողովուրդը տակաւին է որոշած խաղաղութեան բանակցութիւնները հաշուի առնել եւ տակաւին կը հաստատայ, որ ուժով եւ վայրագութեամբ կարելի է ոտնակոխ ընել արդարութիւնը եւ մարդկային իրաւունքները:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ վերոյիշեալ համոզումներուն պատճառով է, որ կը չբնայ արդար եւ ամբողջական խաղաղութիւն կերտելու:

ԴԱՍԱԴՈՒԼ ԵՒ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ

Պետական երկրորդական վարժարաններու մէջ պայմանագիրով աշխատող ուսուցիչներու գերագոյն խորհուրդը երէկ գումարեց ժողով մը. որուն ընթացքին քննարկեց որդեգրուելիք մագլցողական քայլերը եւ այսօր կատարուելիք վզուշացման դասադուլի մասնաւորութիւնները:

Խորհուրդը հաւաստեց, որ վզուշացման դասադուլը պիտի կատարուի այսօր Լիբանանի տարածքին գտնուող բոլոր պետական երկրորդական վարժարաններուն մէջ:

Խորհուրդը վստահեցուց նաեւ, որ եթէ պետութիւնը ձգձգէ իրենց պահանջներուն գործադրութիւնը, պիտի դիմեն մագլցողական քայլերու:

Միւս կողմէ, պետական նախկինական վարժարաններու մէջ պայմանագիրով աշխատող ուսուցիչներու գերագոյն խորհուրդը Թրիփոլիի մէջ ընդհանուր ժողով մը գումարեց եւ վստահեցուց, որ քաղաքապետը եւ ցոյց մը պիտի գործադրէ վաղը՝ Հինգշաբթի, 30 Յունուար 2003ին: Անկախ նաեւ յայտարարեց, որ դասադուլը պիտի շարունակուի մինչեւ ուսուցիչներուն պահանջներուն գործադրութիւնը:

Խորհուրդը կոչ ուղղեց քաղաքական, կուսակցական, սենտրալական եւ ժողովրդային բոլոր հասանքներուն մասնակցելու համար Հինգշաբթի օրուան ցոյցին, որ տեղի պիտի ունենայ Թրիփոլիի Սերային առջեւ, առաւօտեան ժամը 10:30ին:

ԿՈՒՉՈՒՄ

●Ամերիկեան եր քոն-տիչըրի ընկերութիւնը մը (Արեւմտեան Պէյրութ) կարիք ունի քարտուղարուիկի մը 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն/արաբերէն լեզուով հասկանալի գիտնալը պայման: Հեռ. 03-816189 կամ 01-369052 երեկոցեան:
●Սաեի կուզուի փորձառու քեթիսիւն եր-քոնտիչըր գետեղողներ եւ նորագոյններ: ԵՄ ունեցալը նախընտրելի է: Հեռ. 01-378801-5 կամ 03-800601 FAX: 01-378800:

ԿՈՒՉՈՒՄ

Սեւուական Արաբիոյ մէջ աշխատելու համար:
●Սթէյնըս սթիլ սառնարաններ շինողի մը:
●Սթէյնըս սթիլ փուռեր շինողի մը:
●Փորձառու վարպետներ, որոնք կրնան վերակազմել պարտականութիւն ստանձնել: Տարիք՝ 35էն 45ի միջեւ: Վճարման լա պայմաններ: Դիմել՝ պր. Իսմայիլ, հեռ. 01- 801454, 01- 867919, քիւ 801 սեւեակ:
Հեռ. 03-963499:

ՀԱՄԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. թ. Յուլիի 1-3ը Երեւանում կայանալու է Հայաստանի բժշկական առաջին միջազգային խորհրդածողովը Հայաստանի, Արցախի եւ Ափիւզի առողջապահութեան բնագաւառի ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Խորհրդածողովի մասնակցութեան հրաւերը աշխատանքային ծրագրի, քննարկուելիք հարցերի շուրջ եւ այլ մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար դիմել Լիբանանում Հայաստանի դեսպանութիւն՝
Հասցէ՝ 28 Rue des Jasmins, Mtayleb
Հեռ. 04-418860

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ՆՇԱՐ ԻՆՉՊԷՍ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԱԶԵՐԻ ՓԱՆԱԽՈՎԻ «ՈԶ»Ը

Արպէյճանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ Մալախի Փանախով կը մերժէ մաս կապուել ԱՊՀի դէտերու պատուիրակութեան՝ 19 Փետրուարին կայանալիք Հայաստանի նախագահական ընտրութիւններուն ընթացքին: Աւելին: Արպէյճանական լրատուամիջոցներուն համաձայն՝ Փանախով յայտարարած է, թէ միջազգային հանդիպումներու կամ ժողովներու ընթացքին իր հայ պաշտօնակիցը պիտի հրաւիրած է մասնակցելու Հայաստանի նախագահական ընտրութիւններուն իբրեւ դէտ, միաժամանակ առաջարկելով իր կարգին իբրեւ դէտ ներկայ ըլլալ Արպէյճանի նախագահական ընտրութիւններուն ալ անգամ մը եւս կը մերկայանայ Պաքուի հարապատ դիմագիծը, ժողովրդավարութեան տակաւին շատ հեռու ըլլալու անոր հանգամանքը:

Փանախով եւ անոր վարիչները, սակայն, հիմնականին մէջ կը վախնան մէկ պատճառով միայն, որ այլ բան չէ եթէ ոչ Արպէյճանի յառաջիկայ ընտրութիւններուն հաշուոյն մտահոգութիւնը, ամօթի պացուրը: Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ վերջին տարիներուն միջազգային ընտանիքին իսկ հաստատուումով կատարեցին թափանցիկ եւ օրինական ընտրութիւններ, իսկ 19 Փետրուարի ընտրութիւնը բնականաբար տարբեր պիտի չըլլայ, ընդհանրապէս, Հայաստան պիտի փորձէ շատ աւելի փայլուն ընտրութիւններ կատարել եւ միանգամընդմիջտ ապացուցել աշխարհին, թէ ինք քանակակերտ դարձու հասկացողութեամբ կարգին պետութիւն է արդէն, այնպէս ինչպէս քանի մը ամիս առաջ ապացուցեց Լեռնային Ղարաբաղի հայութիւնը: Միւսընդհանրապէս կը շարունակուի տանիքներու դարձու ֆէնտայիլները, որ բնականաբար անխորհրդաւոր դուրս հասկացողութեան, ժողովրդավարութեան պայծառ ընթացումին: Փաստօրէն երբ որդի Ալիեւ պիտի յաջորդէ հայր Ալիեւի, երբ այժմէն իսկ կը խոսուի նախագահական ոչ թափանցիկ ընտրութիւններու մասին, երբ քանի մը ամիս առաջ կայացած հանրաքուէին ընթացքին կատարուած էին կոպիտ խախտումներ՝ միջազգային դէտերուն իսկ վկայութեամբ, կարելի չէ այլեւս խօսիլ ժողովրդավարութեան մասին եւ չհաստատել այդ երկրին աւատապետական ըլլալու փաստացի իրողութիւնը:

Միջազգային ընտանիքը ի՞նչպէս պիտի մեկնաբանէ Փանախովի այս «ոչ»ը: Կրնան հաւանական քանի մը պատասխաններ ալ անգամ մը եւս կը մերկայանայ Պաքուի հարապատ դիմագիծը, ժողովրդավարութեան տակաւին շատ հեռու ըլլալու անոր հանգամանքը: Փանախով եւ անոր վարիչները, սակայն, հիմնականին մէջ կը վախնան մէկ պատճառով միայն, որ այլ բան չէ եթէ ոչ Արպէյճանի յառաջիկայ ընտրութիւններուն հաշուոյն մտահոգութիւնը, ամօթի պացուրը: Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ վերջին տարիներուն միջազգային ընտանիքին իսկ հաստատուումով կատարեցին թափանցիկ եւ օրինական ընտրութիւններ, իսկ 19 Փետրուարի ընտրութիւնը բնականաբար տարբեր պիտի չըլլայ, ընդհանրապէս, Հայաստան պիտի փորձէ շատ աւելի փայլուն ընտրութիւններ կատարել եւ միանգամընդմիջտ ապացուցել աշխարհին, թէ ինք քանակակերտ դարձու հասկացողութեամբ կարգին պետութիւն է արդէն, այնպէս ինչպէս քանի մը ամիս առաջ ապացուցեց Լեռնային Ղարաբաղի հայութիւնը: Միւսընդհանրապէս կը շարունակուի տանիքներու դարձու ֆէնտայիլները, որ բնականաբար անխորհրդաւոր դուրս հասկացողութեան, ժողովրդավարութեան պայծառ ընթացումին: Փաստօրէն երբ որդի Ալիեւ պիտի յաջորդէ հայր Ալիեւի, երբ այժմէն իսկ կը խոսուի նախագահական ոչ թափանցիկ ընտրութիւններու մասին, երբ քանի մը ամիս առաջ կայացած հանրաքուէին ընթացքին կատարուած էին կոպիտ խախտումներ՝ միջազգային դէտերուն իսկ վկայութեամբ, կարելի չէ այլեւս խօսիլ ժողովրդավարութեան մասին եւ չհաստատել այդ երկրին աւատապետական ըլլալու փաստացի իրողութիւնը:

Նախագահ Լահուտ, իր կարգին, զորոշուեց Լիբանան – Սէուական Արաբիա երկկողմանի յարաբերութիւնները եւ Լիբանանի հասնող սեւեական օժանդակութիւնները, յատկապէս ստեղծութեան բարեկեցման նպատակով: Նախագահ Լահուտ իր ողջոյնները ուղարկեց Սէուական Արաբիոյ Ֆահմ թագաւորին:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ երեսփոխան Պութրոս Հարպի: Բնակարկուեցան տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

Իր Հանդիպումէն ետք, Հարպ շեշտեց նախագահ Լահուտի եւ երկրի քաղաքական կազմակերպութիւններուն միջեւ ներկայ գարգացումներուն շուրջ կարծիքներու փոխանակման անհրաժեշտութիւնը: Նախագահական պալատին հիւրերէն դարձան նաեւ երեսփոխաններ՝ Ղազի Չալաթէր, Քարիմ Ռասի, Ժամալ Իսմայիլ, Ղասսան Մուխայպէր եւ Շարլ Ռըզբ:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԵԹԷ

●Գործ կը փնտնեք
●Գործաւոր կ'ուզեք
ԴԻՄԵՑԷԸ
Հեռ. 03-963499:

ԿՈՒՉՈՒՄ

●Հաստատութիւն մը կարիք ունի երիտաւար փորձառու քարտուղարուիկի մը: Կաշառակութիւն եւ համակարգիչ գիտնալը պայման:
Հետաքրքրուողները կրնան դիմել՝ ամեն օր առաւօտեան ժամը 9:00էն 4:00: Հեռ. 01-258018 եւ 01-257235 քիւերուն:

THE CULTURAL HOUR
@
HAIGAZIAN UNIVERSITY
Invites you to a lecture
on
Are We On The Eve Of A New
Sykes - Picot?
By
DR. NICOLA ZIADEH
Professor Emeritus
Thursday, January 30, 2003 - 7 P. M.
Haigazian University auditorium - Kantari

ԲԱՆՏԱՌՈՒԹՅՈՒՆ
Տեր եւ տիկին
Յովիկ եւ Նանի
Թրքեան
բախտաւորուած
են
աղջիկ զաւակով
մը՝
ԿԱԼԻԱ
23 Յունուար 2003
Հայկ

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

«ԿՈՄԻՏԱՍ»-ՔԱՌԵԱԿԸ «ԱԶԳԱԿ»Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ ԱՅՑԵԼԵՑ



Ազգային առաջնորդարանի Ուսումնական հորհուրդին հրաւերով Լիբանան գտնուող «Կոմիտաս» Քառեակին անդամները երէկ այցելեցին «Ազգակ»ի խմբագրատուն, ուր կատարուեցաւ հարցազրոյց մը անոնց հետ:

«Կոմիտաս» Քառեակին միակ էլոյթը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 1 Փետրուար, երէկուց 8:30ին Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էստեպլի <Նոյ>»-ին մէջ:

Քառեակին հետ կատարուած հարցազրոյցը կը հրատարակենք հետագային:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլ Ռահմէ Մրատ երէկ ընդունեց «Էմմըսթի Ինթըրնէշնէլ» մէկ պատուիրակութիւնը: Քննարկուած մի առարկայ դարձան կրթական ծրագիրին մէջ մարդկային իրաւանց շուրջ դասեր ներառելու հաւանականութիւնը:

Մրատի այցելեց նաեւ Հրզնակայի կրթական մէկ պատուիրակութիւնը: Հանդիպումին քննարկուեցաւ երկրին կրթական ընդհանուր կացութիւնը եւ շեշտուեցաւ կրթական մարզին ներս փոխադարձ գործակցութեան անհրաժեշտութիւնը:

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

● ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ Վարչութեան ընդհանուր տնօրէն դոկտ. Մարալ Կիտանեան Քառեակի մէջ պիտի մասնակցի Էսթրոնայի երկիրներուն մէջ վիճակագրական աշխատանքի բարելաւման միջոցառումներուն մասին մէկ խորհրդածոյցովին, որ պիտի կայանայ 1 - 6 Փետրուարին:

● ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՒ Միջազգային կազմակերպութեան կանանց իրաւունքներու յանձնարարութեան նախագահ Ալիա Ջէյն ուղղուեցաւ Նիւ Եորք ներկայ գտնուելու համար նշեալ կազմակերպութեան ընդհանուր ժողովին, որ պիտի կայանայ ՄԱԿի գործատեղին մէջ:

● ՆՈՐԿՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիի Պըրրի երէկ ընդունեց երեսփոխան Նեպիլ Պուսթանին, որուն կ'ընկերակցէր փրոֆ. Անթուան Պուսթանի: Անոնք Պըրրիին յանձնեցին թմրեցուցիչներու մասին գիրք մը:

● ԶԲՕՍԱԵՐՁՈՒԹԵԱՆ նախարար Քարամ Քարամ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Չեխիոյ դեսպան Մարք Սթրիլը, որուն հետ քննարկեց Լիբանան - Չեխիա երկկողմանի յարաբերութիւնները եւ յատկապէս զբօսաշրջութեան մարզին ներս գործակցութեան ամրապնդման հեռանկարները: Նոյն նպատակով ան ընդունեց նաեւ Զուիցերիոյ դեսպան Թոմա Լիսթլըրը:

● ԱՐՏԱԲԻՆ գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամէտ Իսա երէկ ընդունեց Լիբանանի մէջ Քուէյթի դեսպան Ալի Ալեյման Սայիտը: Քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւնները:

ՄՕՏ ՕՓԵՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
«ՌՈՒԲԷՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ»
ՄԱՍՆԱԾԻՒՂ

ՆՌԱՆ ԵՐԳԸ

Աշուղական երգերու ամփոփ սկաւառակը (CD)

Սեկնարանութեամբ՝
ԷԼԻ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ
ՇԱԲԵ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ ԵՒ
ՍԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ

ՇԱՐԷ Ծ. ԿՐԴ. ՓԱՆՈՍԵԱՆ ՍՏԱՆՁՆԵՑ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ի ՏՆՕՐԵՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի որոշումով Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն՝ Շահէ Մ. վրդ. Փանոսեան ստանձնեց Ժիպէյի «Թոլնոց Բոյն»-ի տնօրէնութեան պաշտօնը: «Թոլնոց Բոյն»ը կիլիկիոյ կաթողիկոսութեան ամբողջական հովանաւորութիւնը վայելող ու վեհափառ հայրապետին հայրական հոգածութեան ներքեւ գտնուող այն հաստատութիւնն է, որ Յեղասպանութեան օրերուն հազարաւոր հայ որբերու ապաստան ու տուն դարձաւ: Իսկ այսօր կիլիկիոյ կաթողիկոսութեան առաքելութեան հոգեւոր-եկեղեցական, մշակութային, կրթական ու այլ բազմազան երեսներէն մին՝ ընկերային ծառայութիւնը, գործնապէ՛ս արտայայտող հաստատութիւնն է:

Շահէ Մ. վարդապետ ծնած է Քեսապ: Դպրեվանքի ուսման շրջանը աւարտելէ ետք 1980 թուականին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Դպրեվանքէն ներս քանի մը տարի տեսչութեան իրրեւ անդամ ծառայելէ ետք, կաթողիկոսարանէն ներս ստանձնած է պատասխանատու զանազան պաշտօններ: Թեմական հովուական առաքելութիւն ստանձնելով, 1982-86 տարիներուն եղած է Թեսաղոնիկէի Հայոց հոգեւոր հովիւ: Ապա Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմին մէջ ծառայած է իբրեւ հոգեւոր հովիւ հարաւային Ֆլորիտայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ: 1989ին տեղափոխուած է Շիքաօ, իբրեւ հոգեւոր հովիւ տեղւոյն Ամենայն Սրբոց եկեղեցւոյ եւ այնտեղ ծառայած է մինչեւ 1994: Այնուհետեւ փոխադրուած է Քանաթա, ուր ցարդ կը ծառայէր իբրեւ հոգեւոր հովիւ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ:

ԼԻՔՈՒՏ ԱՊԱՀՈՎԱԾ Է...

Շարունակուած Ա. Էջեմ

գամ անոնք միայն Քնեսէթի անգամները պիտի ընտրեն եւ մեծագոյն թիւը (աթիւներու) ունեցող կուսակցութեան թեկնածուն պիտի դառնայ վարչապետ: Ընտրութիւններուն անպաշտօն արդիւնքները պիտի հրապարակուին այսօր: Ըստ նախատեսութիւններուն՝ Լիքուտ պիտի ունենայ 325-ն 36 աթոռ, Աշխատաւորականները՝ 19, իսկ Շինուի կուսակցութիւնը՝ 16 աթոռ:

Արաքական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա ըսաւ, որ Իսրայէլի կառավարութեան քաղաքականութիւնը որեւէ փոփոխութիւն պիտի չկրէ, եթէ՛ նախատեսուածին համաձայն Շարուն վարչապետ մնայ:

Եզիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաբ ըսաւ, որ Արիէլ Շարոնի հետ կապերը հաստատ պիտի պահէ ընտրութիւններէն ետք: «Իսրայէլի վարչապետին հանդէպ նոր մօտեցում պէտք է որդեգրել, եթէ կ'ուզենք վերականգնել Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը», ըսաւ Մուսարաբ:

Միւս կողմէ, Կազա եւ Ասյորդանան իսրայէլեան ներխուժումի գործողութիւններ եօթը զոհ պատճառեցին: Անոնց կարգին են երեք ծայրայեղական զինեալներ: Ժենիին մէջ սպաննուեցան չորս պաղեստինցիներ, երբ իսրայէլեան ուժերը հրասայելով քաղաք մտան ու ուժեղացրին թաղերը: Իսկ Կազայի վրայ ուղղաթիռներով յարձակում մը երեք զոհ խլեց:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԱԿԵՐԱՑՈՒՑ...

Շարունակուած Ա. Էջեմ

նախագիծը եւ իր աշխատանքը աւարտեց կէսօրէ ետք ժամը 4:15ին:

Փոփոխութեան ենթարկուեցաւ նախագիծին թիւ 5 յօդուածը, որ կառավարութեան կ'արտօնէ դրամ փոխ առնել: Նշեալ յօդուածին ընդդիմացան Պըրրի եւ կարգ մը երեսփոխաններ՝ նկատել տալով, որ կառավարութեան պարտքը արդէն իսկ հսկայ է:

Խորհրդարանը քննեց թիւ 32, 36, 37, 42 եւ 46 յօդուածները:

Առողջապահութեան նախարար Սլէյման Յրենժիէ, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն եւ Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ ներկայ գտնուեցան նիստին եւ քուէարկեցին ի նպաստ պիտուէի նախագիծին:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Այսուհետեւ «Ազգակ» կարելի է գտնել «Սփինճ»-ի Տրապայի մասնաձիւղին մէջ գործող «Մալէք Պուքշափ»-ի մօտ:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

Այսօր՝ Չորեքշաբթի, 29 Յունուար, կտօրուան ժամը 12:00ին, կրնաք լսել մեր հարցազրոյցը «Կոմիտաս» Քառեակին հետ:

السفير
النصار
الذريعات
المستقبل
الاتحاد

السفير
النصار
الذريعات
المستقبل
الاتحاد

Լիբանանեան օրաթերթը իրենց երէկուան թիւով անդրադարձած են պետական պիտուէին նախագիծին քննարկման նուիրումով խորհրդարանի նիստերուն եւ անոր ընթացքին կառավարութեան վրայ եղած յարձակումներուն, Միացեալ Նահանգներու սպանալիքներուն՝ Իրաքի դէմ եւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ քննիչներուն ճշդուած ծամանակամիջոցին երկարաձգման եւ իսրայէլեան ընտրութիւններուն:

«Նահար» գրած է, թէ կառավարութեան դէմ «ոմբակոծումը» կը շարունակուի եւ բջիջային հարցերու յանձնախումբ մը կազմելու կարելիութիւնը ենթահող կը շահի: Ըստ «Մուսթաքապալի», խորհրդարանին նիստերը կ'եզրափակուին եւ կառավարութիւնը իր պաշտպանողականը կը կատարէ:

«Պայրաք» նշած է, թէ Կոր. Լահուտ կը յայտարարէ, որ տագնապներուն լուծումը կը կայանայ ՄԱԿի օրէնքներուն գործադրութեան մէջ: Օմար Քարամէ դիտել կու տայ, որ պահանջուածը ապային հասնուի:

«Նահար» նշած է, թէ Իրաքի մէջ պէնքի քննիչներուն աշխատանքային ժամկէտը երկարաձգելու ճիգերը կ'արդիւնաւորուին: Միւս կողմէ, կը ծրագրուի հարցաքննիչ կորիպային մարպի եզիպտացի գիտնականները:

Ըստ թերթին, Ֆրանսայի նախագահ Շիրաք կը Կորակցի քննիչներուն աշխատանքին՝ մտահոգութիւնը պատերազմին ժխտական անդրադարձով:

Տաւոսի խորհրդածոյցովին ընթացքին Իրաքի պատերազմը ծածկեց տնտեսական քանակցութիւնները եւ քննարկումները, նշած է օրաթերթը:

«Պայրաք»-ի համաձայն, Դամասկոսի մէջ տեղի ունեցաւ ցոյց մը Իրաքի պատերազմին դէմ:

«Մուսթաքապալ» նշած է, թէ Իսրայէլ կը վերանորոգէ իր վստահութիւնը Շարունի եւ անոր տագնապներուն նկատմամբ:

«Պայրաք»-ի համաձայն, 27 ցուցակներ կը մրցին Քնեսէթի 120 աթոռներուն համար: Շարունի յաղթանակը հեշտ է, սակայն անոր կառավարութեան հարցը բարդ է, գրած է թերթը:

Ըստ «Մաֆիր»-ի, Գահիրէի երկխօսութիւնը կը շարունակուի երկու շաբաթ ետք, իսկ նոր ղեկավարութիւնը պիտի կազմուի 12 խմբակցութիւններէ:

Այլ լուրերու կարգին թերթերը գրած են, թէ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ նամակներ ստացաւ Եմէնի նախագահ Սալէ-հէն եւ Ապտալա թագաւորին ու շեշտեց արաբական միասնութեան աշխուժացումը:

Թերթերը նաեւ նշած են, թէ մրրիկները կը հարուածեն Կիպրոսի ծովեզերքը:

BARON TRAVEL & TOURISM AGENCY

(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)

ՓԵՏՐՈՒՄ ԱՍՈՒՄԱՆ ԵՐԱՎՊՏՈՅՆԵՐ

- 9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանի պանդոկ)
- 13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանի պանդոկ)
- DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$-ն սկսեալ

ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ **BARON TRAVEL**, Պուրճ Լամուտ, Մարաշ քաղ, հեռ. 01-263624, 01-241344 եւ 03-275657 թիւերուն:

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ
ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Իտալացի համայնքներու շարքին ժ. դարուն ամենէն աւելի աշխուժացաւ Վենետիկի գաղթածախը, ուր սկիզբ առաւ եւ զարգացաւ հայկական տպագրութիւնը: Համայնքին կարկառուն դէմքերէն դարձաւ յատկապէս Անտոն Սուրբան, որ անդնահատելի ծառայութիւններ մատուցեց Վենետիկի:

ՎԵՆԵՏԻԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԺԵ. ԴԱՐՈՒՆ

Վենետիկ մինչեւ ժ. դարուն սկիզբը կը մնար իտալիոյ եւ նաեւ Եւրոպայի ամենէն հզօր ուժերէն: Թէեւ այս ժամանակ վերջ գտան Ատլանտեանի, Հիւսիսային Անգլիոյ եւ Հոլանտայի հետ առեւտրական աշխուժ կապերը, սակայն Վենետիկ պահեց Եւրոպայի ամէ-

ԻՏԱԼԱՆԱՅ ԳԱՂԹՕՃԱՆ ՎԵՆԵՏԻԿ՝ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

նէն բանուկ առեւտրական կեդրոնի իր հանգամանքը:

Տոն Ֆրանչեսքո Ֆոսքարիի օրով, 1420ական տարիներուն Վենետիկ կռուի բռնուեցաւ իտալական տարբեր քաղաքներու եւ յատկապէս Միլանոյի հետ: Միաժամանակ օսմանցիք կը յառաջանային Պալաքաններու ուղղութեամբ, ուր Վենետիկ գաղթավայրեր ունէր: Թեսաղոնիկէ ինչպէս 1430ին, Պոլիս՝ 1453ին, որմէ ետք Վենետիկեան գաղթավայրերը բոլորովին մե-

կուսացան: Վենետիկ կռուի բռնուեցաւ նաեւ Ֆերրարայի հետ, որ 1484ին գրաւեց Փոլեսինէի շրջանը:

Սպանիա, Ֆրանսա, գերմանական իշխանութիւններ, պապը, հունգարներ սաւուռացիք եւ Ֆերրարա 1508ին մեծ պատերազմի ձեռնարկեցին Վենետիկի դէմ, որ ծանր պարտութիւն կրեց Ակնատելլոյ ճակատամարտին: Պատերազմական վիճակին բերումով Արեւելքի եւ Արեւմուտքի ճամբաները անապահով դարձան, եւ Վենետիկ, Արեւելքի շուկաները կորսնցուցած ըլլալով եւ Արեւմուտքի մէջ ալ նոր հողեր նուաճելու հնարաւորութենէն զրկուած ըլլալով, տնտեսական նեղ կացութեան մատուցեցաւ: Այնուհետեւ Վենետիկ իր ամրոցը ուժը կեդրոնացուց թուրքերուն դէպի Արեւմուտք յառաջխաղացքը կասեցնելու համար:



Վենետիկ. Ֆերալի քրանցը եւ Հայոց Տունը


ՅԱԿՈՒ ՄԵՂԱՊՈՐՏ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ

Վենետիկ, հակառակ տնտեսական իր դժուարութիւններուն եւ առեւտրական գործառնութիւններու տկարացման, մշակութային ճառագայթման կարեւոր կեդրոնի վերածուած էր. մշակոյթ աւելի մասնաշէնի դարձնելու նպատակով Ալտո Մանուցիօ զարգացուց տպագրութիւնը, եւ Վենետիկ հաստատուած հայեր օգտուեցան նպաստաւոր առիթէն:

Առաջին անգամ Յակոբ Մեղապարտ, որ որոշ ժամանակ ապրած ու գործած է Վենետիկի մէջ, տեղացի գրածուրդ վարպետներու մօտ պատրաստել տուաւ հայերէն տեսակ մը բոլորագիր եւ գլխագիր տառաստեակներ, ինչպէս նաեւ՝ զարդագիրեր, պատկերներ, չորս քառանկիւն պարզերու եւ վերնագիրներու յատուկ քսանչորս զարդաձեւ շրջանակներու տպագրական աւտոստաններ եւ 1512ին տպարան բանալով ձեռնարկեց աշխատանքի: Առաջին անգամ, նոյն տարին ան հրատարակեց «Պարագաւումար»ը, որ տոմարագիտական բովանդակութիւն ունի եւ գլխագիր չունի աշխատանքի պաշտօնի կէ: 1513ին յոյս տեսան հինգ կամ վեց գիրքեր (որոնցմէ հինգը պահպանուած են): «Տաղարան», ուր պահպանուած են ժողովրդական աննման տաղեր, «Բժշկարան» եւ հաքիմարան ըստոյց եւ գարմանալի մեծի ձայնախնոյս (Գալիլանո) հաքիմին արարեալը, «Ուրբաքաղիք», ուր գրուած են հիւանդութենէ առողջանալու աղօթքներ, «Պատարագատետր», ուր Աւետարանէն հատուածներ ամփոփուած են, եւ «Աղբարք», ուր կան շարք խափանելու կարողութիւն ունեցող կախարդական արտայայտութիւններ: Նշենք, որ միայն «Պատարագատետր»ը ունի հրատարակութեան թիւանոցը, վայրը եւ տպագրիչին անունը կրող յիշատակարան:

ցի, որուն ընտանիքը կը նկատուէր Հայոց թագաւորներու սերունդէն: Միքայէլ Ա. Սերաստացի կաթողիկոս, որ 1562ին Սերաստիա ապստամբած էր, եպիսկոպոսներու գաղտնի խորհրդակցութենէ մը ետք, Արզար Դպիրի զլիսաւորութեամբ պատգամաւորութիւն մը ուղարկեց Հոռոմ՝ Պիոս Դ. պապին մօտ, Հայաստանի ազատագրութեան եւ դաւանական հարցերով: Արզար Դպիրի առաքելութեան գլխաւոր նպատակն էր համոզել պապը, որպէսզի գինուորական միջամտութեան դիմէ այսպիսիններու լուծին տակ հեծող քրիստոնէայ հայերու պաշտպանութեան համար: Արզար Դպիրի կ'ընկերանային գաւալը՝ Սուլթանահաճ եւ Աղիբասաղը ստուծով մտերիմ մը:

Պատարակները 1563ին Վենետիկ ցամաք ելան, ուր անոնք ճանդիպում ունեցան տոնին եւ ձերբակոյտի անգամներուն հետ: Այնուհետեւ անոնք ուղղուեցան Հոռոմ, ուր սիրալիք ընդունելութեան արժանացան պապին կողմէ: Արզար Դպիր Հոռոմի եպիսկոպոսին փոխանցեց Հայոց կաթողիկոսին պատգամը: Առաքելութիւնը շօշափելի արդիւնք չտուաւ, բայց պապը, նկատի ունենալով Արզարի ազնուական ծագումը, պատրաստակամութեամբ յարաբերուեց պայմանաւորաբար: Քահանայապետը եւ անոր թոռը՝ Քարլօ Պորրոմէօ (որ



Արզար Դպիր

հետագային Միլանոյի արքեպիսկոպոս եղաւ եւ սրբացուեցաւ) հայերէն տառեր կտրել տալու իրաւունք տուին անոր:

Հոռոմի մէջ Հայերէն տառեր կտրել տալէ ետք Արզար Դպիր վերագարձաւ Վենետիկ նպատակ ունենալով հոն զբաղելու հրատարակչական գործունէութեամբ: Տոն ձերբակոյտի արտօնութիւնը եւս ստանալէ ետք, Արզար 1565ին հրատարակեց տոմարական աշխատութիւնը մը՝ «Խառնայ փերուր տունարի գեղեցիկ եւ պիտանի» խորագիրով (մէկ էջի վրայ): Նոյն տարին ան լոյս ընծայեց «Փոքրիկ մեկնիչ Սաղմոսաց» գրքով, որ բաղկացած է 272 էջերէ: Առաջին երկու էջերուն ներկայացուած են գիրքին պատմութիւնը: Նշենք, որ «Փոքրիկ մեկնիչ Սաղմոսաց»էն երկու օրինակ միայն մնացած է. մէկը՝ Միլանոյի արքեպիսկոպոսին Ս. Ղազարի, իսկ միւսը՝ Միլանոյի Ամպոզիանա մատենադարաններուն մէջ:

Արզար Դպիր 1567ին իր հրատարակչական գործունէութիւնը վենետիկէն տեղափոխեց Պոլիս, ուր գաւկիսի՝ Սուլթանահաճի հետ Հայոց եկեղեցւոյ քահանայ մէջ տպարան հիմնեց, որ առաջինն էր Միլանոյի Արեւելքի մէջ, ուրկէ հրատարակեց վեց գիրք: 1567ին՝ «Փոքր քերականութիւն», 1568ին՝ «Պարագաւումար», «Ժամագիրք» եւ «Պատարագամատոյց» (միայն), «Տօնացոյց», «Տաղարան», 1569ին՝ «Մաշտոց»:

ԱՐԶԱՐ ԳՊԻՐ ԵՒ ԱՆՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՒՆԸ

Յակոբ Մեղապարտի տպագրական գործին շարունակողը եղաւ Արզար Դպիր թոխաթե-

Սիկիլիոյ Մեսսինա քաղաքին մէջ, մինչև նոյն օրերուն, 9 Սեպտեմբերին թուրքեր գրաւեցին Նիկոսիան, պաշարեցին Փամակուսթան, իսկ օսմանեան ծովուծը մտաւ Ատրիական ծով եւ Յունաստանի ափերը հակակշիռի տակ առնելով գրաւեց Լեփանթոյի մօտակայ Փարթսի ծոցը:

Քրիստոնէայ դաշնակից նաւատորմը բաղկացած էր 208 մարտնակներէ, որոնց 106ը՝ վենետիկեան, 90ը՝ սպանական եւ ձեռնոճական եւ 12ը՝ պապական, 1800 կտոր հրետանիով եւ ութսուն հազար զինուորներով, որոնց հրամանատարն էր Ֆրանչեսքո Սուրտո: Եւրաքանջիւր նաւու վրայ բարձրացած էր յաջազար մետաքսէ դրօշակ. Անտոն Սուրբանի շնորհիւ բարեփոխուած էր վենետիկեան հրետանին եւ ումբերուն հետաօսուելու գրեթէ կրկնապատկուած էր: Օսմանեան նաւատորմը բաղկացած էր 222 մարտնակներէ՝ 90 հազար զինուորներով եւ 750 կտոր հրետանիով. նաւերուն ներմակ մետաքսէ դրօշակներուն վրայ արձանագրուած էր «Ալլախ» հրամանատարներէն էին՝ Ալի վաչա, Մոհամմէտ Սոլաք (Աղբասաղիոյ կառավարիչը) եւ Ուլուս Ալի:

Քրիստոնէայ նաւատորմը Քորֆուէն նամբայ ելաւ Սեպտեմբեր 15ին (1571) եւ սկսաւ յառաջանալ կիսաշրջանակաձեւ. առջեւէն գոյգ - գոյգ, կ'ընթացային վենետիկեան վեց եռակայմ մարտանաւեր. որոնց իւրաքանչիւր կողմը կար երեսուցական էր:

Թշնամի երկու նաւատորմերը իրարու հանդիպեցան 7 Հոկտեմբերին (1571), Լեփանթոյի մօտ: Անտոն Սուրբան արդէն պատրաստած էր թնդանօթներուն ուղղութիւնները, որոնք անվրէպ ումբակոծումը ծանրօրէն սկսաւ վնասել թրքական մարտնակներուն եւ խուճապի մատնել գաւունքը: Կռուի տաք պահուն Անտոն յաջողեցաւ փրկել ընկղմելու վտանգին ենթակայ հրամանատար Տուրտոյի մեծ մարտանաւը եւ զայն եւս մասնակից դարձնել նաւամարտին:

Չորս ժամուան կատաղի ծովամարտէ մը ետք օսմանեան նաւատորմը ջախջախեցաւ եւ 117 մարտնակներ ու հազարաւոր զինուորներ գերի ինկան քրիստոնէայ բանակին ձեռքը:

Վենետիկի մէջ 21 Յունիս 1575ին ծայր առաւ ժամուան փառաբան համահարակ մը, որ սկսաւ աւերներ գործել. ստեղծուեցան մեկուսացած դարմանավայրեր, իսկ նաւակներու վրայ դարմանատուներ պատրաստուեցան: Կառավարութիւնը, նկատի ունենալով, որ Անտոն իր յայտնաբերած դեղով բազմիցս հիւանդներ փրկած է, դիմեց անոր: Անտոն Սուրբան իր պատրաստած եւ պարունակութիւնը գաղտնի դեղներով բժշկեց հազարաւոր մարդիկ, փրկեց հազարաւոր ընտանիքներ: 21 Յունիս 1577ին համահարակը հռչակուեցաւ յաղթանակով:

Սակայն իր այսքան անգնահատելի ծառայութիւններուն դիմաց կառավարութիւնը բաւարարուեցաւ միայն նաւաշինարանէն անվնար սնունդ ստանալու իրաւունքը շնորհելով անոր: Յուսար ու դաւանացած՝ Անտոն, որ իր ընտանիքին հետ Սան Մարթինոս քաղաքին մէջ վարձու ապարանքի մը մէջ կը բնակէր, սնանկացաւ, եւ օր մըն ալ 34 դուկատ պարտքի մը համար վտարուեցաւ բնակարանէն. իշխանութիւնները միջամտեցին տանտիրոջ՝ Պեռնարտօ Տրեւիզանի մօտ, որպէսզի սպասէ մինչեւ պարտքին վճարումը: Լքուած, անտեսուած ու հիւժած՝ Անտոն Սուրբան մահացաւ 22 Օգոստոս 1591ին, Սան Մարթինոս քաղի իր բնակած բնակարանին մէջ, տակաւին վաքսուս տարիքը չըլորած:

Անոր սերունդները՝ Սուրբանները հետագային ազնուականի կոչում ստացան եւ աւելի քան մէկ դար իրենց ներգրումը ունեցան Վենետիկի պատմութեան մէջ իրրեւ երեւելի ու հարուստ վաճառականներու ընտանիք:

ԱՆՏՈՆ ՍՈՒՐԵԱՆ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՒՈՐ ԴԵՄՔԵՐԷՆ

Վենետիկի պատմութեան մէջ հռչակաւոր դարձաւ Անտոն Սուրբան ականաւոր հայ գիտնականը. ան աւելի ծանօթ է Անտոն Հայ - Անթոնիօ Արմենո անունով, որ անգնահատելի ծառայութիւններ մատուցեց Վենետիկի:

Անտոն Սուրբան, դատելով իր ազգանունէն, հաւանաբար Սուրիայէն ժամանած էր Վենետիկ. արդարեւ, այդ ժամանակ Վենետիկի մէջ (նաեւ այլուր) սովորութիւն կար Արեւելքէն ժամանող անձերու անուան իբրեւ ազգանուն կցել այն երկրին, շրջանին կամ քաղաքին անունը, ուրկէ եկած էր ան:

Անտոն Վենետիկ հասաւ 1550ական տարիներուն սկիզբը. շաքար եւ գլինի փոխադրող նաւով մը, երբ մօտաւորապէս քսան տարեկան էր: Հոն ան ծանօթացաւ Քարսելիօ քաղաքին մէջ գտնուող Նաւաշինարանին, ուր տասնվեց հազար աշխատողներ կը պատրաստէին Վենետիկի ծովային ուժը եւ պարծանքը կարգող առեւտրական եւ պատերազմական նաւերը: Նաւերու շինութեան եւ ծովային կեանքին մասին փորձառութիւն եւ գիտութիւն ունենալով Անտոն դիմեց տոնին՝ Նաւաշինարանին մէջ աշխատելու համար, յայտնելով, որ իր նարարութիւնը կրնայ ի սպաս դնել Վենետիկի ծովային զարգացման համար: Տոնը եւ ձերբակոչուած ընդառաջեցին դիմումին. եւ ան ընկուցուեցաւ Նաւաշինարան:

Անտոն Սուրբան շուտով, շատ կարճ ժամանակի ընթացքին յայտնաբերեց իր ձեռնարկեցողութիւնը, մանաւանդ՝ երբ ջուրին երեսը հանեց նաւահանգիստին մօտ ընկղմած անազանատնան մը՝ իր բաւարարութեք ապրանքներով, նորոգեց ձիւղումս Քրոնթարինիի թնդանօթաձիգ առգաստանաւին երեք թնդանօթները, ինչպէս նաեւ իր ներդրումը ունեցաւ մարտնակներուն վրայ թնդանօթներու «Երկաթեայ ալգի» կոչուող պահեստարանի ստեղծման համար:

Այլեւս համբաււոր դարձած վարպետը ամուսնացաւ Վենետիկցի գեղուհի Քիարայի հետ, որմէ ունեցաւ վեց զահի:

Անտոն Հայ այնուհետեւ մշակեց նաւերը ջուր իջեցնելու համակարգ մը, ինչպէս նաեւ հնարեց մեքենայ մը, որուն օգնութեամբ դարբերու ընթացքին կուտակուած տիղմէն կը մաքրէր վենետիկի նաւահանգիստը եւ ջրանցքները: Ան նաեւ ստեղծեց աշխարհի առաջին փրկարար նաւերէն մէկը: Վենետիկի դիւանատան մէջ մինչեւ հիմա պահուած է իր մէկ դիմումագիրը, որով ան արտօնութիւն կը խնդրէ իր հնարած փրկարար նաւակով Վենետիկի ծովային խորշին տակէն հանելու հոն ընկղմած եւ նաւերու նաւահանգիստ մուտքը դժուարացնող մարտնակ մը: Արտօնագիրը ստացաւ 17 Յունիս 1561ին եւ անմիջապէս գործի անցնելով յաջողեցաւ դուրս բերել ընկղմած մարտնակը: Գիւտին մեքենայը նորից իրեն պահելով՝ ան տարիներու ընթացքին ծովուն մակերեսը հանցեց ընկղմած ուրիշ երկու մարտնակներ՝ «Տելլա Վեկա Անտոն» եւ «Շիլաուոնիա», ինչպէս նաեւ՝ ֆրանսական «Մարսիլիանա», կիպրական «Կիրանտա» եւ ուրիշ բազմաթիւ փոխադրանակներ, որոնք ընկղմած էին դարբնաւ:

Սուրբան Սելիմ Բ.ի օսմանեան բանակը 1570ին ներխուժեց Կիպրոս, որ վենետիկեան գաղտնիք էր: Օսմանցիներուն նպատակն էր արեւելեան Միջերկրականի կղզիները գրաւել եւ յետոյ յառաջանալ Եւրոպայի խորքերը:

Վենետիկցիք, դիմագրաւելու համար օսմանեան վտանգը, 25 Մայիս 1571ին քրիստոնէական դաշնակցութիւն մը կազմեցին Պիոս Ե. պապին եւ Սպանիոյ Ֆելիք Բ. քաղաւորին հետ: Ֆելիք Բ. իր խորք եղբայրը՝ Տոն խուանը ուղարկեց իրրեւ հրամանատար քրիստոնէայ բանակին:

Քրիստոնէայ դաշնակից ուժերը 24 Օգոստոս 1571ին սկսան համախմբուիլ

